

ՀԱՆՐԱՊԵՄ ԳԱՆԱՏԱՅԻ ՎԱՐՉԱԴԵՏ ՓՈԼ ՄԱՐԹԻՆԻ ՀԵՏ

Ապրիլ 20, 2005. Չորեքշաբթի օր, պարմական օր մը արձանագրուեցաւ Գանապահայ պարեգրութեան մէջ, երբ Գանապահայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Բագրատ եպս. Գալստան-եանի գլխաւորութեամբ փասնըմէկ հոգինոց ազգային պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ երկրի վարչապետ՝ Փօլ Մարթինի հետ, մայրաքաղաք Օթթաւայի վարչապետարանին մէջ:

Այս այցելութիւնը կը զուգարկաւոր Գանապայի Խորհրդարանի կողմէ՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման առաջին փարեղարձին: Ինչպէս ծանօթ է, անցեալ տարւոյն Ապրիլի 21-ին, Գանապան պաշտօնապէս ճանչցած էր Եղեռնի պարմական իրողութիւնը շնորհիւ երեսփոխաններ Սարգիս Ասատուրեանի և Ճիմ Զարիճիանիսի:

Վերոյիշեալ հանդիպումը կազմակերպուած էր Հայկական Համաշխարհային Ընկերակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ և ՌԱԿ Միացեալ Նահանգներու Արևելեան շրջանի և Գանապայի Շրջանային Վարչութեան փոխարեւնապետ Հրաչ Պօյաճեանի նախաձեռնութեամբ և օգնութեամբ Խորհրդարանի Հայասէր անդամ Ճիմ Զարիճիանիսի:

Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմէին. Գանապահայոց փոխառաջնորդ՝ Հոգշ. Տ. Արարատ Ժ. վրդ. Գալթազեան, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգևոր հովիւ՝ Արժ. Տ. Զարեհ ա. քնյ. Զարգարեան, Թեմական Խորհուրդի արեւնադալի՝ Կիար Արթօ Պասմաճեան, Թեմական Խորհուրդի անդամ Կիկիկ Լիլիան Սվաճեան. ՌԱԿ Կեդրոնական Վարչութեան գանձապահ և Հայ Իրաւանց Խորհուրդի համադրող Կիար Մայք Խարապեան, Հ. Հ. Ընկերակցութեան անդամ Կիար Արմէն Զիւրքեան, Կիար Նուրհան Ուզունեան, օր. Սոսի Պօյաճեան և Կիար Սեակ Սաղըրեան, ինչպէս նաև Գանապայի Ազգային Ժողովի անդամներ՝ Կիար Ճիմ Զարիճիանիս և Կիկիկ Ռէյմոն Ֆոլքս:

Հանդիպման ընթացին Գանապական Հռչակագիրին - Canadian Charter of Rights and Freedom - Հայերէն լեզուի թարգմանութիւնը ընտիր փապգրութեամբ պաշտօնապէս ստորագրուեցաւ վարչապետին կողմէ՝ ու յանձնուեցաւ Գանապահայոց առաջնորդ՝ Գերշ. Բագրատ եպս. Գալստանեանին: Այս Հռչակագիրը թարգմանուած էր պրն Նուրհան Ուզունեանի կողմէ:

Հանդիպման աւարտին, առաջնորդ Սրբազան Հայրը վարչապետին ներկայացուց Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի գնահատագիրը և յանուն Վեհափառ Հայրապետի և Գանապայի հայ համայնքի ապակեայ գեղեցիկ Խաչքար մը նուիրեց վարչապետին:

ԳԱՆԱՏԱՀԱՅՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՄԱՍԼՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ